ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.02.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 10/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-10/17) և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 08.02.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ/1221-17 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի 09.02.2017թ. գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ԳԲԽ-10/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 17.02.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1.<u>«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 02.02.2017թ. բողոքով հայտնել է, որ վերջինս 14.12.2016թ. մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաշմանդամների լսողական ապարատների և սայլակների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընկերությունը նշել է, որ մասնակցել է Ընթացակարգի 4-12-րդ չափաբաժիններին, սակայն որպես առաջին տեղ զբաղեցրած է ճանաչվել 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով, իսկ մնացած չափաբաժինների մասով որպես ընտրված մասնակից

է ճանաչվել «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն (այսուհետ նաև՝ ՀԿ): Ընկերությունը Պատվիրատուից պահանջել է ՀԿ-ի կողմից ներկայացված որպես նախկինում կատարված պայմանագրերի պատճենները, որոնք ուսումնասիրելուց հետո պարզվել է, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված հավելված 3.1-ի, քանի որ չեն ներկայացվել հրավերով պահանջվող նախկինում կատարված պայմանագրի պատճենը և հանձնման-ընդունման արձանագրությունները:

Ըստ Ընկերության՝ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը, ինչպես նաև Կարգի 65-րդ կետը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ համարել (դադարեցնել) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՀԿ-ին 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված մասնակից ճանաչելու որոշումը, ինչպես նաև խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգի արդյունքում նշված չափաբաժիններով պայմանագիր կնքելու գործընթացը, իսկ եթե կնքվել է պայմանագիր նշված չափաբաժինների մասով, ապա այն հայտարարել ապօրինի և չեղյալ համարել «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի հետ կնքված պայմանագիրը:

2. «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 07.02.2017թ. թիվ 013 գրությամբ «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն խնդրել է վերջինիս ներառել թիվ ԳԲԽ-10/17 բողոքի քննության գործով որպես երրորդ կողմ:

«Սատար» հաշմանդամների ՀԿ-ն 09.02.2017թ. գրությամբ հայտնել է, որ ՀԿ-ն մասնակցել է Ընթացակարգին և 21.12.2016թ.-ին armeps համակարգից ավտոմատ ծանուցմամբ ստացել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը: Վերոհիշյալ որոշմամբ անգործության ժամկետ է սահմանվել 2016թ. դեկտեմբերի 24-ից մինչև 2017թ. հունվարի 2-ը ներառյալ:

Ըստ ՀԿ-ի՝ անգործության ժամկետը լրացել է 02.01.2017թ., սակայն պայմանագրի կնքումը կասեցվել է 30.01.2017թ.-ին, իսկ բողոքը ներկայացվել է 02.02.2017թ. Ընկերության կողմից անգործության ժամկետը լրանալուց մեկ ամիս հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀԿ-ն խնդրել է մերժել Ընկերության կողմից 02.02.2017թ. ներկայացված բողոքն ամբողջությամբ:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.02.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ/1221-17 գրությամբ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մի շարք չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված ՀԿ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջները հավաստող փաստաթղթերը համարվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել:

«Սատար» հաշմանդամների ՀԿ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթղթերն ընդունվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստացի ՀԿ-ն պատշաճ կերպով իրականացրել է սայլակների մատակարարում, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել նաև Պատվիրատուին:

4. ԳԲԽ-10/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 17.02.2017թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել. Դադարեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաշմանդամների լսողական ապարատների և սայլակների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սատար» ՀԿ-ին 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

5. ԳԲԽ-10/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-10/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաշմանդամների լսողական ապարատների և սայլակների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն և «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն:

2. Ընկերությունն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար՝ **12 160 000 ՀՀ դրամ**, 2-րդ չափաբաժնի համար՝ **21 259 000 ՀՀ դրամ**, 4-րդ չափաբաժնի համար՝ **7 989 000 ՀՀ դրամ**, 5-րդ չափաբաժնի համար՝ **2 388 000 ՀՀ դրամ**, 6-րդ չափաբաժնի համար՝ **7 989 000 ՀՀ դրամ**, 7-րդ չափաբաժնի համար՝ **5 548 800 ՀՀ դրամ**, 8-րդ չափաբաժնի համար՝ **9 896 400 ՀՀ դրամ**, 9-րդ չափաբաժնի համար՝ **1 649 400 ՀՀ դրամ**, 10-րդ չափաբաժնի համար՝ **4 320 000 ՀՀ դրամ**, 11-րդ չափաբաժնի համար՝ **3 195 600 ՀՀ դրամ** և 12-րդ չափաբաժնի համար՝ **11 388 000 ՀՀ դրամ:**

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն հայտով ներկայացրած N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է՝

- Համաձայնագիր (2013թ. իրականացված ծրագրի շրջանակներում, 59 874 9 ԱՄՆ դոլար)
- Համաձայնագիր (2014թ. իրականացված ծրագրի շրջանակներում, 35 037 ԱՄՆ դոլար)
- Համաձայնագիր (2014թ. իրականացված ծրագրի շրջանակներում, 12 686 117 5 ՀՀ դրամ:

Որոնց ընդհանուր արժեքը կազմել է 94 911 9 ԱՄՆ դոլար և 12 686 117 ՀՀ դրամ, և պարտավորվում է նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդ որում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 14.12.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 6-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Սատար» հաշմանդամների ՀԿ-ին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.12.2016թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 1-ին կետով որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը՝ «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերում արձանագրված անճշտությունները շտկելու հնարավորություն տալու նպատակով:

6. ՀԿ-ն ներկայացրել է օրենքով սահմանված որպես նախկինում կատարած համանման՝ Սուբսիդիայի տրամադրման ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ 02.09.2014թ. կնքված N ՍՏՊ-11.01.01.01/14-1 ծածկագրով Պայմանագրի պատճենը, ըստ որի ՀՀ 2014թ. պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 01 դասի 01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողն՝ իր կանոնադրական նպատակներին համաձայն ստանձնում կազմակերպության՝ «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի կողմից ներկրված 300 հաշմանդամի սայլակները հավաքելու և սայլակի կարիք ունեցող անձանց իրենց բնակության հասցեներում տրամադրելու ծառայությունների մատուցման պարտավորությունները, սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N1 հավելվածով նախատեսված նկարագրին, N 2 հավելվածով սահմանված ցուցանիշներին համապատասխան: Նշված պայմանագրի ***ընդհանուր արժեքը կազմել է՝ 1 773 500 ՀՀ դրամ, իսկ պայմանագրի վերջնաժամկետը սահմանվել է մինչև 25.12.2014թ.:***

7. «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն N ՍՏՊ-11.01.01.01/14-1 ծածկագրով Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացրել է տվյալ Պայմանագրի կողմերի հաստատած հանձնման-ընդունման արձանագրություն, ըստ որի՝ «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն Պայմանագրի սահմանված ժամկետում՝ ***25.12.2014թ. մատուցել է 1 773 500 ՀՀ դրամի ծառայություն:***

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2 որոշմամբ «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն ճանաչվել է ընտրված մասնակից 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

9. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝ ի դեմս ԳԲԽ-10/17 բողոքը քննող հանձնաժողովի, 08.02.2017թ. կայացրած որոշմամբ, բավարարել է «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

6.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը քննելով Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի

«բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած ***գնային առաջարկի հիսուն տոկոսից***, որից առնվազն մեկ պայմանագիր

շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.***

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Ընթացակարգի Հրավերի 2.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Ընդ որում Մասնակցի՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: ***Նմանատիպ են համարվում «լսողական սարքեր», «լսողական սարքերի ներդիրներ», «հաշմանդամների սայլակներ» ապրանքների մատակարարումը:***

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Այսպիսով, ՀԿ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար՝ **12 160 000 ՀՀ դրամ**, 2-րդ չափաբաժնի համար՝ **21 259 000 ՀՀ դրամ**, 4-րդ չափաբաժնի համար՝ **7 989 000 ՀՀ դրամ**, 5-րդ չափաբաժնի համար՝ **2 388 000 ՀՀ դրամ**, 6-րդ չափաբաժնի համար՝ **7 989 000 ՀՀ դրամ**, 7-րդ չափաբաժնի համար՝ **5 548 800 ՀՀ դրամ**, 8-րդ չափաբաժնի համար՝ **9 896 400 ՀՀ դրամ**, 9-րդ չափաբաժնի համար՝ **1 649 400 ՀՀ դրամ**, 10-րդ չափաբաժնի համար՝ **4 320 000 ՀՀ դրամ**, 11-րդ չափաբաժնի համար՝ **3 195 600 ՀՀ դրամ** և 12-րդ չափաբաժնի համար՝ **11 388 000 ՀՀ դրամ:**

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն հայտով ներկայացրած N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է՝

- Համաձայնագիր (2013թ. իրականացված ծրագրի շրջանակներում, 59 874 9 ԱՄՆ դոլար)
- Համաձայնագիր (2014թ. իրականացված ծրագրի շրջանակներում, 35 037 ԱՄՆ դոլար)
- Համաձայնագիր (2014թ. իրականացված ծրագրի շրջանակներում, 12 686 117 5 ՀՀ դրամ:

Որոնց ընդհանուր արժեքը կազմել է 94 911 9 ԱՄՆ դոլար և 12 686 117 ՀՀ դրամ, և պարտավորվում է նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդ որում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, առաջարկել է ՀԿ-ին սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.12.2016թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 1-ին կետով որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը՝ «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթերում արձանագրված անճշտությունները շտկելու հնարավորություն տալու նպատակով:

Արդյունքում, ՀԿ-ն որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է օրենքով սահմանված որպես նախկինում կատարած համանման՝ Սուբսիդիայի տրամադրման ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ 02.09.2014թ. կնքված N ՍՏՊ-11.01.01.01/14-1 Պայմանագրի պատճենը, ըստ որի՝ ՀՀ 2014թ. պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 01 դասի 01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողն՝ իր կանոնադրական նպատակներին համաձայն ստանձնում է կազմակերպության՝ «Սատար» հաշմանդամների **<u>ՀԿ-ի կողմից ներկրված</u>** 300 հաշմանդամի սայլակները հավաքելու և սայլակի կարիք ունեցող անձանց իրենց բնակության հասցեներում տրամադրելու ծառայությունների մատուցման պարտավորությունները, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով նախատեսված նկարագրին, N 2 հավելվածով սահմանված ցուցանիշներին

համապատասխան: Նշված պայմանագրի ***ընդհանուր արժեքը կազմել է՝ 1 773 500 ՀՀ դրամ, իսկ պայմանագրի վերջնաժամկետը սահմանվել է մինչև 25.12.2014թ.:***

N ՍՏՊ-11.01.01.01/14-1 Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի կողմից ներկայացվել է տվյալ Պայմանագրի կողմերի հաստատած հանձնման-ընդունման արձանագրությունն, ըստ որի՝ ՀԿ-ն Պայմանագրի սահմանված ժամկետում՝ ***25.12.2014թ. մատուցել է 1 773 500 ՀՀ դրամի ծառայություն:***

Ընկերությունը ներկայացրած բողոքով հայտնել է, որ Պատվիրատուից պահանջել է ՀԿ-ի կողմից ներկայացված որպես նախկինում կատարված պայմանագրերի պատճենները, որոնք ուսումնասիրելուց հետո պարզվել է, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված հավելված N 3.1-ին, քանի որ չեն ներկայացվել հրավերով պահանջվող նախկինում կատարված պայմանագրի պատճենը և հանձնման-ընդունման արձանագրությունները:

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀԿ-ի կողմից ներկայացված որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ օրենքով սահմանված որպես նախկինում կատարած համանման՝ Սուբսիդիայի տրամադրման ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ 02.09.2014թ. կնքված N ՍՏՊ-11.01.01.01/14-1 ծածկագրով Պայմանագիրը, պարզել է, որ չնայած այն հանգամանքին, որ ըստ նշված պայմանագրի «Սատար» հաշմանդամների **ՀԿ-ն պարտավորվել է իր կողմից ներկրված** թվով 300 հաշմանդամի սայլակները հավաքելու և սայլակի կարիք ունեցող անձանց իրենց բնակության հասցեներում տրամադրելու ծառայություններ մատուցել, այնուամենայնիվ Ընթացակարգին ՀԿ-ի կողմից հայտով առավելագույն գնային առաջարկը ներկայացվել է 2-րդ չափաբաժնի համար՝ ***21 259 000 ՀՀ դրամ,*** ինչի պայմաններում ՀԿ-ի կողմից ներկայացված N ՍՏՊ-11.01.01.01/14-1 Պայմանագիրը չի կարող համարվել նմանատիպ, քանի որ դրա շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ կազմել է ***1 773 500 ՀՀ դրամ***, որը պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչպես նաև ներկայացված պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է ՀԿ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի քսան տոկոսից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, քանի որ ՀԿ-ի կողմից ներկայացված պայմանագրի ընդհանուր գինը կազմել է ***1 773 500 ՀՀ դրամ***, իսկ Ընթացակարգին մասնակցելու նպատակով վերջինիս կողմից ներկայացված հայտի առավելագույն գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի համար կազմել է ***21 259 000 ՀՀ դրամ***: Հետևաբար ՀԿ-ի կողմից, որպես իր մասնագիտական փորձառություն չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայության ծավալը, գումարային արտահայտությամբ, պակաս է ՀԿ-ի կողմից ներկայացված **(ըստ առանձին չափաբաժինների)** գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչպես նաև ներկայացված պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է ՀԿ-ի կողմից **(ըստ առանձին չափաբաժինների)** ներկայացված գնային առաջարկի քսան տոկոսից:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.03.2016թ. թիվ 1/73-1/9634-16 շրջաբերականով հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2016թ. թիվ 667-Ն հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերով սահմանված է, որ մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հիշյալ օրինակելի ձևերում նշված է նաև, որ հայտերի գնահատումը, համեմատումը և *հաղթողների որոշումն իրականացվելու* է՝ ըստ առանձին չափաբաժինների:

Վերոգրյալով պայմանավորված՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ գնման գործընթացի մասնակիցների հայտերը, այդ ***թվում որակավորման չափանիշներն անհրաժեշտ է գնահատել՝ ըստ առանձին չափաբաժինների:*** Հետևաբար, վերը նշված N ՍՏՊ-11.01.01.01/14-1 Պայմանագիրը ***չի կարող դիտարկվել Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին բավարարող***, ինչը հաստատվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2016թ. թիվ 1/73-1/9634-16 շրջաբերականով:

Միևնույն ժամանակ անդրադառնալով Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի հայտով ներկայացրած N 3.1 հավելվածին, հայտնում ենք, որ ՀԿ-ն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է Համաձայնագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 94 911 9 ԱՄՆ դոլար և 12 686 117 ՀՀ դրամ, և պարտավորվում է նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ***հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:***

Ինչ վերաբերում է ՀԿ-ի հայտով ներկայացրած N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ ներկայացված Համաձայնագրերին, ապա Խորհուրդը հայտնում է, որ Պատվիրատուն հայտը գնահատելիս համարել է դրանք ոչ պատշաճ և ՀԿ-ին տվել է նշված որակավորման փաստաթուղթը շտկելու հնարավորություն, որի արդյունքում վերջինս որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ օրենքով սահմանված որպես նախկինում կատարած համանման պայմանագիր ներկայացրել է Սուբսիդիայի տրամադրման ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ 02.09.2014թ. կնքված N ՍՏՊ-11.01.01.01/14-1 ծածկագրով Պայմանագիրը:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, ***պետք է ունենա պայմանագրով***

նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, իսկ 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և ***որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:***

Այսպիսով, Ընթացակարգի Հրավերի 2.3 կետով սահմանվել է մասնակցի **«Մասնագիտական փորձառություն» չափանիշը, որը գնահատվում է հետևյալ կարգով,** երբ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված *որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա **պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:***

Խորհուրդն, ուսումնասիրելով վերը նշված Համաձայնագրերը, նույնպես գտնում է, որ դրանք ***չեն կարող դիտարկվել Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի և Ընթացակարգի Հրավերի 2.3 կետի պահանջներին բավարարող,*** քանի որ դրանց կցված չէ երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը, նշված չէ ապրանքի ընդհանուր գինը, վերջնաժամկետը, ինչն էական պայման է հանդիսանում «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ուստի Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքով Ընթացակարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքված լինելու դեպքում Ընթացակարգն ապօրինի հայտարարելու պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ քանի որ Ընթացակարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի միջև պայմանագիր դեռևս չի կնքվել, ուստի վերոհիշյալ պահանջն առարկայազուրկ է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել. Դադարեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաշմանդամների լսողական ապարատների և սայլակների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սատար» ՀԿ-ին 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Պողոսյան Լիդիա**